



Ձ. ԿԻՐԱԿԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷՆ ԵՍՐ



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ Եութեամբ, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, քրիստո՛ս Աստուած, եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկե՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԿ.

Օրհնութիւն բարձունքներու մէջ Կոյսէն ծնած մեր Թագաւորին. ալէլուի՛ա, ալէլուի՛ա:

Օրհնութիւն բարձունքներու մէջ մեր անսասանելի եւ հաստատուն Յոյսին.
ալելուի՛ա, ալելուի՛ա:

Օրհնութիւն բարձունքներու մէջ անբաժանելի եւ միասնական Սուրբ
Երրորդութեան. ալելուի՛ա, ալելուի՛ա:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 - 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը
վայելէ, եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛ եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼ ՉԷ ՄԵՐԺՈՒԱԾ

**Ս. Պօղոս Առաքեալի Հռոմէացիներուն ուղղած թուղթն է ընթերցուածը
(Հռ. 11, 13-24)**

Ձեզի կ'ըսեմ, հեթանոսներ, այն չափով, որ ես հեթանոսներու առաքեալն եմ, կը փառաւորեմ իմ պաշտօնս՝ իմ արենակիցներուս նախանձը շարժելու եւ անոնցմէ ոմանք փրկութեան հասցնելու համար: Արդարեւ, եթէ անոնց մեկուսացումը առիթ եղաւ աշխարհի հաշտութեան, անոնց ընտրութիւնը պիտի ըլլայ կենդանութիւն՝ մեռելներու մէջէն: Եթէ սկիզբը սուրբ է, ամբողջ զանգուածն ալ սուրբ է: Եթէ արմատները սուրբ են, պտուղներն ալ սուրբ պիտի ըլլան: Եթէ ճիւղերէն ոմանք ջախջախուեցան եւ դուն, վայրի ոստ ձիթենիի, պատուաստուեցար ճիւղերուն, որպէսզի հաղորդակցիս ձիթենիի արմատներուն պարարտութեան, մի՛ հպարտանար միւս ոստերուն դիմաց: Եթէ հպարտանաս՝ մտածէ, որ դուն չես արմատներ կրողը, այլ արմատներն են, որոնք քեզ կը կրեն: Թերեւս մտածես. ոստերը ջախջախուեցան, որպէսզի ես պատուաստուիմ: Անոնք ջախջախուեցան իրենց անհաւա-

տարմութեան հետեւանքով, իսկ դուն պատուաստուեցար հաւատքով: Մի՛ հպարտանար ուրեմն, այլ՝ վախցիր: Որովհետեւ եթէ Աստուած չխնայեց հարազատ ոստերուն, թերեւս քեզի ալ չխնայէ:

Տե՛ս ուրեմն Աստուծոյ բարութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ անոնց հանդէպ որ ինկան: Բարութիւն՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ դուն մնաս այդ բարութեան մէջ, ապա թէ ոչ՝ դուն ալ կը խորտակուիս:

Եթէ անոնք չյամառին նոյն անհաւատարմութեան մէջ, պիտի պատուաստուին: Աստուած ըստ բաւականին կարողութիւն ունի զանոնք վերստին պատուաստելու: Որովհետեւ եթէ դուն որ բնութեամբ կը պատկանիս վայրի ձիթենիին եւ հակառակ բնութեանդ՝ պատուաստուեցար ընտանի ձիթենիի վրայ, որչափ եւս անելի անոնք վերստին պիտի պատուաստուին իրենց հարազատ ձիթենիին վրայ, որուն կը պատկանին բնութեամբ:

Ալելուիա, Ալելուիա,

Կանգնէ՛ Տէր իմ, Աստուած իմ, Զու հրամաններուդ գործադրութիւնը պահանջէ՛ եւ բազմաթիւ ժողովուրդներ շուրջդ պիտի հաւաքուին:

(Սղմ. 7, 8)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ ՀԱՅԵՐՈՒ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

(Մատթ . 14, 13-21)

Տերն մեր Յիսուս Զրիստոս, այս լուրին վրայ, նաևակով քաշուեցաւ մեկուսի անապատ տեղ մը: Ժողովուրդը իմանալով՝ զանազան քաղաքներէ, հետիոտն հետեւեցաւ իրեն: Նաևակէն իջնելով՝ տեսաւ հոծ բազմութիւնը, գուրջ շարժեցաւ եւ բուժեց անոնց հիւանդները: Իրիկունը, աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին. «Տեղը անապատ է եւ ժամը առաջացած. արձակէ՛ ժողովուրդը, որ երթայ շրջակայ գիւղերէն ուտելիք գնէ»: Յիսուս ըսաւ անոնց. «Կարիք չունին երթալու, դուք կերակուր տուէք անոնց»: «Մենք հինգ հաց եւ երկու ձուկ ունինք», պատասխանեցին: «Ինծի՛ բերէք զանոնք», ըսաւ Յիսուս: Հրամայեց նախ ժողովուրդին, որ նստին խոտերու վրայ, յետոյ առաւ հինգ հացերը եւ երկու ձուկերը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց զանոնք, կտրեց եւ տուաւ աշակերտներուն, որ բաժնէն ժողովուրդին: Բոլորը կերան ու կշտացան: Աւելցած կտորներ



ով լեցուցին տասներկու սակառներ: Իսկ կերողները շուրջ հինգ հազար հոգի էին, առանց հաշուելու կիներն ու մանուկները:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Հաշուետուութիւն, բուժում եւ օրհնութիւն՝ քիչին մէջ

Այսօրուան Աւետարանը, հաւատացեալներուն համար կը ներառէ մի քանի ուսմունքներ եւ մտորումներ. այս հրաշքը, մանրամասնութիւններու փոքր տարբերութեամբ, նշուած է չորս Աւետարաններուն մէջ ալ: Այսօրուան Աւետարանի նախորդ հատուածին մէջ, Սուրբ Մարկոսի համաձայն, կը կարդանք հետեւեալը. «Երբ առաքեալները վերադարձան, Անոր պատմեցին այն ամէնը, զոր կատարեցին, եւ Ան իր հետ առնելով զանոնք, քաշուեցաւ եւ առանձնացաւ ամայի տեղ մը» (Մար. 9-10): Ասիկա կը նշանակէ, թէ մենք ամէն օր պարտաւոր ենք հաշիւ տալու, այսինքն պետք է առանձնանանք եւ պատմենք Յիսուսի, որ միշտ մեր կողքին է, այն ամէնը, որ մենք ըրինք, գոր-

ծադրեցինք, եւ ըսինք, քանի որ Անոր հաճելի է լսել մեզ, թէեւ Ան նախապէս գիտէ այդ ամէնը, սակայն այս առանձնութիւնը կարելոր է, գիտնալու համար, թէ որքանով մենք կը քալենք Յիսուսի ճանապարհէն եւ կը գործենք իր ուսմունքին ու կամքին համաձայն: Միեւնոյն ժամանակ, առիթը կ'ունենանք շնորհակալութիւն յայտնելու Յիսուսին, իր բոլոր տուածներուն համար, եւ ներողութիւն հայցելու, եթէ թերացած ենք, եւ իրմէ խնդրելու, որ մեզի իմաստութիւն, գիտակցութիւն, եւ բաւարար ուժ տայ, որպէսզի կարողանանք յառաջանալ մեր քրիստոնէական կեանքին մէջ:

Ինչպէս արդէն բացատրեցինք Աւետարանիչներու միջեւ փոքր տարբե-

րութիւններուն մասին, Սուրբ Մարկոս այսպէս կը պատմէ հրաշքը. «Յիսուս, երբ դուրս ելաւ, մեծ բազմութիւն մը տեսնելով՝ գթաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին» (Մար: 6-34): Իսկ Սուրբ Մատթէոս, հետեւեալ կերպով կը պատմէ. «Երբ դուրս ելաւ, տեսնելով մեծ բազմութիւն մը՝ գթաց անոնց վրայ ու բուժեց անոնց հիւանդները» (Մատթ. 14-14): Երկու պարագաներուն ալ, կրնանք եզրակացնել հետեւեալը, թէ Յիսուս չ'ուզէր, եւ չի կրնար զրկել մարդ արարածը իր Յօր Աստուծոյ սէրէն, անօգնական ու անմխիթար ձգել՝ կեանքի դժուարութիւններու տուայտանքին մէջ: Երբ Ան տեսաւ զանոնք, կարեկցեցաւ եւ բուժեց զանոնք: «Յիւանդութիւն» բառը կ'ընդգրկէ հոգեւոր եւ ֆիզիքական իմաստը: Յիսուս կ'ուզէ, որ մենք առողջ եւ կատարեալ ըլլանք՝ մեր Երկնաւոր Յօր նման: (Մատթ. 5-48): Այսինքն, եթէ մենք հետեւինք Յօր կամքին, ապա Յայր Աստուած առատօրէն մեզի կու տայ իր շնորհքները Սուրբ Յոգիին միջոցաւ եւ այսպիսով կը դառնանք կատարեալ: Դետեաբար, բուժումը առաջնահերթ է Յիսուսի համար, եւ այդ մէկը կը բխի Անոր անսահման սէրէն: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ես՝ անոնց մէջ, ու Դուն՝ իմ մէջս. որպէսզի իրենք կատարելապէս մէկ ըլլան, եւ աշխարհը գիտնայ թէ Դո՛ւն զրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս սիրեցիր զիս» (Յովհաննես 17.23):

Միւս կողմէն, Յիսուս կարողութիւնն ունի յագեցում տալու բազմութեան: Որպէսզի իմանան, որ Ան կարողութիւն ունի յագեցում տալու իրենց, եւ այս հրաշքը կրկնուած է միայն երկու անգամ, քանի որ Յիսուս չի ցանկար, որ մենք իր հետ մնանք ու իրեն կապուինք միայն սնունդի համար, այլ՝ յաւիտենական բարիքներուն համար: Այս պատճառով Յիսուս քննեց առաքել-



ներուն հաւատքը, երբ անոնց ըսաւ. «Դո՛ւք տուէք անոնց՝ որ ուտեն»: Մարդկային տեսանկիւնէն, անոնք չհասկցան, եւ հարցուցին, թէ ինչպէս կրնային կերակրել, բացի կիներէն եւ երեխաներէն, 5000 մարդ: Այս հարցումին պատասխանը արագ եկաւ Յիսուսին աւելցնելու համար իրենց հաւատքը. այն քիչը որ գտան տղուն մօտ, այսինքն հինգ նկանակ ու երկու ձուկ, բազմացան եւ հրաշքը կատարեցաւ: Քիչը, որ մենք ունինք, կը շատնայ Յիսուսի ձեռքերուն մէջ: Այս մէկը կը վկայէ որ պետք է աշխատինք, այնքան՝ որքան մենք կրնանք, ծոյլ չըլլանք եւ թողունք որ Յիսուսի օրհնութիւնը իջնայ ու լուծուի մեր գործերուն վրայ, եւ այսպէս, մեր պայքարով շահած այն քիչը՝ Յիսուսի օրհնութեամբ կը դառնայ շատ:

Վերջապէս հաւասարութիւնը ստոյգ կերպով կ'ըսէ. «Աստուած ստեղծեց մեզ իր սէրէն, եւ Յիսուս խնամեց մեզ իր քաղցրութեամբ եւ ողորմութեամբ, եւ Սուրբ Յոգին պարուրեց մեզ իր շնորհքներով»: